ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնի տնօրեն Արմեն Սարգսյան

2.Գործուղման վայրը և ժամկետները՝

Հունաստանի Հանրապետություն, քաղաք Կարդիցա

3. Հրավիրող կողմ՝

Փառատոնը կազմակերպվում է **Կարդիցայի մշակութային միությունների միության** կողմից՝ տեղական քաղաքապետարանի, Թեսալիայի պրեֆեկտուրայի, առևտրի պալատի և Հունական ուղղափառ եկեղեցու աջակցությամբ: Հրավիրող կողմ Հունաստան՝ փառատոնի նախագահ՝ Մանոլիս Ստերգիոպուլոս, գլխավոր քարտուղար՝ Իոաննիս Գլինոս

4.Գործուղման նպատակը՝

Ներկայացնել հայկական Էթնիկ պարարվեստը միջազգային հարթակում: Ամրապնդել մշակութային կապերը, ձևավորել երկարաժամկետ գործընկերներ ոլորտում՝ տարբեր երկրների հետ: Ներկայացնել ազգային պարը որպես հայկական ազգային մշակույթի ոչ նյութական ժառանգություն: Հանրահռչակել հայկական ազգային տարազը արտերկրում: Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնի մասնակցությունը հերթական քայլն է հայկական մշակութային ժառանգության պահպանման, հանրայնացման և միջազգային ճանաչելիության բարձրացման ուղղությամբ, ինչը կենտրոնի առաջնահերթ առաքելություններից է:

5. Քննարկման թեման՝

Փառատոնի մասնակցություն:

«Պարեր առանց սահմանների» խորագրով հանդիպում-քննարկումներ:

.մասնակից երկրների ստեղծած միջավայրի միջմշակութային փոխառնչությունները,

. հայկական մշակույթի դարավոր ներկայությանը:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

6.1 Հանդիսավոր բացում՝ հունիսի 20-ին, Կարդիցայի կենտրոնական հրապարակում, որտեղ Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնի «Ակունք» պետական ազգագրական համույթը ներկայացրեց ազգագրական և ավանդական երգ ու պարեր: Ելույթներ՝

Հունիսի 21-ին Պալիուրիում, 22-ին՝ Արտեսիանոյում, 23-ին՝ Մակրիխորիում, 24-ին՝ Կալիֆոնիում, 25-ին՝Կարդիցիայում, 26-ին՝ Լեոնտարիում:

6.2 Փառատոնի փակման հանդիսավոր արարողություն՝ Հունիսի 26-ին Կարդիցայում, ուր ներկա էին քաղաքապետ Վասիլիս Ցիակոս, Թեսալիայի փոխտարածաշրջանային կառավարիչ, Կարդիցայի տարածաշրջանային միավորի պատասխանատու Կոնստանտինոս Տելիոս:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Քննարկվեցին երկողմ ծրագրեր, ձևավորվեց երկարաժամկետ համագործակցության տեսլական:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Փառատոնն իր տեսակի մեջ եզակի էր, քանի որ միավորում էր տարբեր երկրների արտիստներին՝ մշակութային բազմազանությունը ցուցադրելու համար:

Երկրների միջև արդեն ձևավորված երկողմ ծրագրերի իրականացում՝ Կենտրոնի կազմում գործունեություն ծավալող պետական անսաբլների մասնակցությամբ:

Կրթական ծրագրեր՝ ազգային նվագարաններ, պարարվեստ, երաժշտարվեստ թեմաներով:

Միջմշակութային ճանաչողական վարպետաց դասեր, մշակութային երկխոսություն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Արմեն Սարգսյան

01.07.2026թ.